ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«10» փետրվար 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-05/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-1/12952-16 և 25.01.2017թ. թիվ 03/73-3/1041-17 գրություններով ներկայացված ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1012 գրության հիման վրա, 27.04.2016թ. թիվ 1/73-1/12952-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 06.12.2016թ. թիվ 01/04.1/4429-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-1/12952-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրվել է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.01.2017թ. թիվ 03/73-3/1041-16 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը, անհրաժեշտ է նախաձեռնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. <u>««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 03.05.2016թ. թիվ 01/04.1/1735-16 գրությամբ դիմել է ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրությանը՝ Ընկերությունը 16.05.2016թ. գրությամբ հայտնել է, որ 24.12.2015թ. տեղի է ունեցել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով մրցույթի հայտերի բացման նիստը, որին ներկա է գտնվել ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Մաղաքյանը (անձնագիր՝ ԱՄ 0372406, տրված՝ 12.07.2011թ. 012-ի կողմից): Նիստի արդյունքում որոշվել են առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցները և ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր...: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Հաշվի առնելով այն, որ նիստը չի կասեցվել և բացման նիստի արձանագրությունը Պատվիրատուի կողմից չի ուղարկվել հայտերի բացման նիստին հաջորդող 3 աշխատանքային օրերի ընթացքում ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ուղարկվել են հրավերում նշված էլեկտրոնային փոստի հասցեին (g.teryan@mil.am) հայտերի բացման նիստին հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 30.12.2015թ.:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ նշված ընթացակարգի համակարգողի կողմից ծանուցումն ուղարկվել է 13.01.2016թ.՝ չնայած այն հանգամանքին, որ տվյալ ծանուցումը պետք է ուղարկված լիներ 25.12.2015թ.:

Ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվել է gnumner.am կայքում 14.01.2016թ.:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի, որի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,

գ. որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց

դ. օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:

Ընկերությունը հայտնել է, որ ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն պատշաճ ձևով կատարել է ՀՀ պատվիրատուների հետ իր կողմից կնքված բոլոր պայմանագրերը, իր կողմից մասնակցած բոլոր գնման գործընթացներին ներկայացրել է իրականությանը համապատասխանող տվյալներ, չի դրսևորել հակամրցակցային վարքագիծ, գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք հաշվետու տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար: Ընթացակարգի շրջանակներում ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և Ընկերությունը չի հայտարարվել ընտրված մասնակից, ուստի և չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ընկերության կողմից վերոհիշյալ գրությամբ ներկայացվել է ***«d.agroxim@gmail.com» էլեկտրոնային հասցեից «g.teryan@mil.am» էլեկտրոնային հասցեին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը 30.12.2015թ. ուղարկված լինելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպում:***

««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 01.02.2017թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-05/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկ-ները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1012 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ««ՏԴ» Դոնսկոյ

Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում Ընկերությունը պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.01.2017թ. թիվ ԴՎԱ/27 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված Ընթացակարգի հայտերի բացման նիստին, որը կայացել է 24.12.2015թ. հրապարակվել է միայն մասնակիցների գնային առաջարկները, այլ ոչ թե որոշվել են առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայտերի էլեկտրոնային բացման ժամանակ անհրաժեշտ է միայն գնահատող հանձնաժողովի թվով երկու բացող և մեկ գնահատող անդամների ներկայությունը, իսկ մասնակիցների հայտերի էլեկտրոնային գնահատման ժամանակ՝ հանձնաժողովի բոլոր գնահատող անդամների ներկայությունը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թվով 11 մասնակիցների հայտերի ամփոփումը և գնահատումը կատարվել է 12.01.2016թ.: Այսինքն Ընթացակարգի հայտերի բացման նիստը ավարտվել է 12.01.2016թ.:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկված համապատասխան հարցման մեջ նշված է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրության 4.1 որոշումը կայացվել է 12.01.2016թ., ուստի համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների համապատասխան ծանուցումներն ուղարկվել են 13.01.2016թ., որին ի պատասխան՝ ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվել, ինչը հիմք է հանդիսացել մասնակցի հայտը մերժելու համար:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ 30.12.2015թ. որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը իր կողմից ուղարկվել են, ապա

Պատվիրատուն հայտնել է, որ նման փաստաթղթեր գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին չեն ստացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 01.02.2017թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-05/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-05/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-1/12952-16 և 25.01.2017թ. թիվ 03/73-3/1041-17 գրություններով ներկայացված ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով նախատեսված փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ ***<u>g.teryan@mil.am</u>***:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2015թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային եղանակով հայտ են ներկայացրել թվով 11 մասնակից:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***<u>24.12.2015թ.</u>*** ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

5. Նույն արձանագրության 4.2 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած

մասնակիցներին առաջարկել ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ***13.01.2016թ.*** Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև Ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով չհիմնավորված ցածր գնային առաջարկի լրացուցիչ հիմնավորումներ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.01.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի հայտը մերժել է, պատճառաբանելով, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

8. ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին ուղղված գրությանը կից ներկայացվել է ***«d.agroxim@gmail.com» էլեկտրոնային հասցեից «g.teryan@mil.am» էլեկտրոնային հասցեին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը 30.12.2015թ. ուղարկված լինելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպումը:***

5. ՍՑ-ԳԲԽ-05/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 19.04.2016թ. թիվ ԴՎԱ/1012 և 16.01.20147թ. թիվ ԴՎԱ/27 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու

պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման

չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, ***որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը*** հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***<u>24.12.2015թ.</u>*** ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Նույն նիստի արձանագրության 4.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշվել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հաշվի առնելով, որ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումն, համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի, մասնակցին պետք է ուղարկվեր հայտերի բացման նիստին հաջորդող աշխատանքային օրը և միևնույն ժամանակ չստանալով նշված ծանուցումն, Ընկերությունը հայտերի բացման նիստին ***(24.12.2015թ.)*** հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 30.12.2015թ., ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին, ինչը հավաստվում է

Ընկերության կողմից ներկայացված ***«d.agroxim@gmail.com» էլեկտրոնային հասցեից «g.teryan@mil.am» էլեկտրոնային հասցեին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը 30.12.2015թ. ուղարկված լինելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպումը:***

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ Ընկերությունն, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներով, կատարել է գնումների գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ 30.12.2015թ. Պատվիրատուին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ չնայած այն հանգամանքին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկվել է Ընկերությանը միայն ***13.01.2016թ. (մինչդեռ հայտերի բացման նիստը, համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 և 3 արձանագրությունների, տեղի է ունեցել 24.12.2015թ.)***:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարության 16.01.2017թ. թիվ ԴՎԱ/27 գրությամբ հայտնած այն դիրքորոշմանը, որ Ընկերության կողմից ուղարկված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին չեն ստացվել, ապա ներկայացվել է ***էլեկտրոնային փոստի համապատասխան էջի արտատպումը, որը հավաստում է «d.agroxim@gmail.com» էլեկտրոնային հասցեից «g.teryan@mil.am» էլեկտրոնային հասցեին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթե-րը 30.12.2015թ. ուղարկելու փաստը:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 27.04.2016թ. թիվ 1/73-1/12952-16 և 25.01.2017թ. թիվ 03/73-3/1041-17 գրություններով ներկայացված ««ՏԴ» Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 6111984985) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, ուստի առաջարկում ենք Ընկերությանը Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-05/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան